





Տ. ԶԱՐԵՀ Ծ. ՎՐԴ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԻՐ ԴՈՎՏՈՐԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բուխարեստում, Աստվածաբանական ինստիտուտի հարկի տակ, 1975 թվականի դեկտեմբերի 18-ին տեղի է ունեցել Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի «Հայ եկեղեցու պատարագը արևելյան այլ պատարագների համեմատությամբ» դոկտորական աշխատության պաշտպանությունը:

Քննիչ հանձնաժողովը բաղկացած է եղել յոթ մասնագետ դասախոսներից՝ նախագահությամբ պատրիարքական փոխանորդ տ. Ռոման եպիսկոպոսի:

Պաշտպանության նիստին ներկա են եղել նաև բազմաթիվ բարձրաստիճանի հոգևորականներ, դասախոսներ, Աստվածաբանության ինստիտուտի ուսանողներ և ուսմիհանայ թեմական խորհրդի ու Բուխարեստի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ թեմական խորհրդի ատենապետ դոկտ.-պրոֆ. Գրիգոր Բամբուկյանի:

Դոկտորական պաշտպանության նիստի ավարտին տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանն արտասանել է հետևյալ խոսքը.

«Արևելյան հին եկեղեցիների ընտանիքից Հայաստանյայց տուլերեն եկեղեցին, տակավին հնագույն ժամանակներից սկսած, ամենամանաշավածն է եղել ուսմիհանական հողի վրա, իբրև հետևանք այն իրողության, որ ճակատագրից հալածված հայ գաղթականություններ գտել են ապաստան հյուրընկալ այս երկրում:

1401 հուլիս 30 թվականի ակտը, որով Մոլդավիո իշխան Ալեքսանդրու 2-րդ-ը իր հրովարտակով հաստատում էր առաջին

անգամ լինելով հայ եպիսկոպոսություն Մոլդավիո այն ժամանակվա մայրաքաղաք Սուչավայում, մի պատահական դեպք չէր հանդիսանում: Պատմական ուսմեն հարաբերությունների տեսակետից մեծ նշանակություն ունեցող այդ ակտը հանդիսանում էր արտահայտությունը և արգասիքը տասնյակ տարիների բարեկամության և եղբայրական կապերի երկու ժողովուրդների միջև, որոնց հիմքում ընկած էին փոխադարձ բարի կամեցողությունը և սերը՝ նպատակ ունենալով ամրապնդումը երկրի ներքին խաղաղության, բարգավաճման և ազատության:

Հայ եկեղեցու պատմությունը, դավանանքը և ծեսը սկսան առավել չափով ճանաչվել ԺԹ դարի կեսերից սկսյալ, ոչ միայն ուսմիհանների և հայերի միջև հարաբերությունների զարգացումով, այլ նաև աշխատություններով և ուսումնասիրություններով՝ ետադրված հայերի կամ ուսմիհանցիների կողմից: Թվում է, թե ուսմեն օրթոդոքս եկեղեցվո առաջին բարձրաստիճանի հոգևորականը, որը զբաղվել է հայ եկեղեցու պատմությամբ և Ռումինիո հայերով, եղել է Գերասիմ Թեմուշ եպիսկոպոսը, որը 1890—91 թվականներին հրատարակել է ուսումնասիրություններ և հոդվածներ «Ռումեն օրթոդոքս հանդես»-ի մեջ:

Եղբայրական դարավոր կապերը ուսմեն օրթոդոքս եկեղեցու և հայ եկեղեցու միջև առավել խորացան վերջին 25 տարիների ընթացքում, մանավանդ շնորհիվ սերտ բարեկամության նորին Սրբություն ժուստի-

միան Պատրիարքի և Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսի, որը 1943—53 տարիներին եղել էր թեմակալ առաջնորդը Ռումիկիո հայոց:

Ի տես մեր երկու եկեղեցիների պետերի ջանքերի և ավետարանական սիրով նրանց էկումենիկ հարաբերությունների, որոնք մեր օրերին հասել են մեծ հառաչդիմության, ես օգտակար համարեցի ուսումնասիրել այս թեման՝ իբրև համեմատ մի արտահայտություն մեր եկեղեցիների առավել մերձեցման և փոխըմբռնման:

Իմ այս աշխատության մեջ ներկայացնելով բոլոր հարցերը՝ կապված հայ եկեղեցու պատարագի հնության և կազմավորման հետ, ես ջանացի որքան որ կարողացա բարեխղճությամբ կատարել իմ առաջադրանքը՝ առաջնորդված խորունկ հարգանքով հանդեպ ուսման օրթոդոքս եկեղեցին և հայ եկեղեցին, որի խոնարհ մեկ սպասավորն եմ ես:

Խնդրում եմ թույլ տվեք ինձ այս առիթով իմ երախտագիտությունը հայտնել Նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքին՝ նրա հայրական հոգածության համար, տեղապես ցուցաբերված իմ հանդեպ իմ ուսանողության ամբողջ ընթացքին:

Այս դահլիճում գտնվում են մաս Բուխարեստի հայոց թեմական խորհրդի և համայնքի անդամները, որոնց ներկայության պարտք եմ զգում արտահայտել իմ որդիական սիրո և երախտագիտության զգացմունքները Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսի հանդեպ, հավաստիացնելով Ձեզ, որ պիտի շարունակեմ մասն ապագային բանիլ և գործով հետևելու տարիներ առաջ Նրա տված պատվերին, որ է՝ իմ համեստ միջոցներով նպաստել մեր երկու եկեղեցիների եղբայրական հարաբերությունների խորացմանը և ամրապնդմանը:

Հայտնում եմ մաս իմ շնորհակալությունը գերաշնորհ տ. Տիրայր եպս. Մարտիկյանին՝ առաջնորդը մեր թեմի, նրա տնական հոգածության համար դեպի իմ անձը իմ ուսման շրջանին:

Ջերմագին շնորհակալություններ Ձերո Սրբազնության, որ բարեհաճեցիք նախագահել այս նիստը և անչափ բարի կամեցողություն և քաջալերանք ցուցաբերեցիք իմ այս աշխատասիրության նկատմամբ:

Ջերմ շնորհակալություններ մաս արժանապատիվ հայրեր պրոֆ. Ալեքսանդր Մոյսիին և Գլագրին, Սիրիու քաղաքի Աստվածաբանական ինստիտուտից, որոնք բարեհաճեցին քննարկել իմ դոկտորական այս աշխատանքը:

Շնորհակալություն պատվարժան քննիչ հանձնաժողովի բոլոր անդամներին, որոնք ի սկզբանե ճշմարիտ դաստիարակների վերաբերմունք ունեցան դեպի ինձ՝ օգնելով ամեն քայլափոխին իմ ուսումնասիրության ընթացքում:

Իմ շնորհակալությունը մասնավորապես պրոֆ. հայր Էմե Բրանիշտեին, որ իր գիտական պահանջկոտությամբ պարտավորեցրեց ինձ ընդգրկել ուսումնասիրության լայն մի ծրագիր հարուստ աղբյուրների օգտագործմամբ և որը շատ մեծ սիրով օգնեց ինձ իմ դոկտորական թեզի պաշտպանության ընթացքում:

Կամենում եմ հավաստիացնել Ձեզ բոլորիդ, որ այն տիտղոսը, որ ընծայեցիք ինձ, չեմ ընդունելու իբրև պատկավորումը իմ հաջողության, այլ այն հանդիսանալու է ինձ համար սկզբնավորությունը նոր գործունեության և ճիգերի՝ եկեղեցիների մերձեցման և գործակցության ճանապարհի վրա՝ ի փառս Աստուծո և ի հոգևոր մխիթարություն մեր հավատացյալների»:

